Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«05» 03 20 18թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի վերապատրաստումը (այսուհետ՝ ԱՎ) անց է կացվում «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի պահանջների, Համալսարանի ռազմավարական զարգացման պլանի, Համալսարանի կանոնադրության և Որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) բաժնի կանոնադրության պահանջների համաձայն:

1.2. Կրեդիտային համակարգով ԱՎ ծրագրի նպատակն է՝ ապահովել պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ընդհանուր, առարկայական, մասնագիտական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը: Համաձայն վերոնշված պահանջների Համալսարանի յուրաքանչյուր դասախոս պարտավոր է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում համաձայն «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի և Համալսարանի կանոնադրության պահանջների:

1.3. ԱՎ ծրագիրը համարվում է պարտադիր Համալսարանի վաթսուն տարին չլրացած հիմնական դասախոսների, ուսումնաօժանդակ կազմի համար, առնվազն երեք տարվա անընդհատ ստաժի դեպքում: Համալսարանի մյուս դասախոսները, ինչպես նաև

հանրապետության մյուս բուհերի դասախոսները կարող են մասնակցել ԱՎ դասընթացներին կամ ընտրաբար՝ գործատուի համաձայնությամբ:

1.4. Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ԱՎ ծրագիրը ֆինանսավորվում է Համալսարանի միջոցների հաշվին, այլ բուհերի դասախոսներինը՝ վճարովի հիմունքով, ինչը սահմանվում է ռեկտորի հրամանով:

2. ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1. Համալսարանի ՈԱ բաժնի կողմից պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ԱՎ դասընթացների ժամկետը (առնվազն 4, իսկ առավելագույնը 6 շաբաթ) հաստատում է Համալսարանի ռեկտորը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ԱՎ գործընթացն իրականացվում է Ուսումնական մասի և ՈԱ բաժնի կողմից մշակված և Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված որակավորման բարձրացման դասընթացների համար սահմանված ուսումնական պլաններով և ծրագրերով:

2.2. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ԱՎ իրականացվում է աշխատանքին զուգընթաց կամ արտաժամյա:

2.3. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ԱՎ ծրագրի բեռնվածությունը կազմում է առավելագույնը 9 (ECTS) կրեդիտ, որից 3–ը՝ օտար լեզվի /անգլերեն/ իմացության կարողությունների զարգացման բաժնից, 3–ը՝ մանկավարժություն և հոգեբանություն իմացության բաժնից, 3–ը՝ կրթական համակարգի բարեփոխումներ և որակի ապահովման բաժնից:

2.4. Մասնակցի պարտադիր լսարանային շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանվում է հաստատված ուսումնական պլաններով: Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի դասընթացների արդյունքների ամփոփումն իրականացվում է համաձայն Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական պլաններում սահմանված ձևերի և չափանիշների:

2.5. Համալսարանում ԱՎ դասընթացներն իրականացվում են հետևյալ ուղղություններով՝

- օտար լեզու (անգլերեն լեզվի իմացություն),
- մանկավարժություն և հոգեբանություն,
- բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովման համատեքստ:

2.6. Վերապատրաստման հիմնական նպատակը պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների և կարողությունների արդիականացումն է՝ ժամանակակից կրթության և աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Ծրագրի կազմակերպական հարցերով ընդհանուր պատասխանատվությունը և համակարգումը վերապահվում են Համալսարանի Ուսումնական մասին և ՈԱ բաժնին:

3.2. Ծրագրի բովանդակային հարցերով՝

3.2.1. Ընդհանուր պատասխանատվություն են կրում Համալսարանի համապատասխան ստորաբաժանումները, ամբիոնները և բաժինները:

3.2.2. Ծրագրի կատարման շահագրգիռ անձը և գլխավոր պատասխանատուն մասնակիցն է: Յուրաքանչյուր մասնակից ինքը պետք է ժամանակին իրազեկի ՄՌԿ և ընդհանուր բաժին ԱՎ ծրագրով իր վաստակած կրեդիտների մասին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթուղթ:

4. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Ուսումնական ծրագրերը մշակում է ուսումնական մասը:

4.2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա նախատեսվող դասընթացների ժամանակացույցը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից, որից հետո տեղադրվում է Համալսարանի կայքէջում, ինչպես նաև ուղարկվում համապատասխան ստորաբաժանումներ: Տեղադրվում են նաև ուսումնական ծրագրերը:

4.3. Ունկնդիրը, ծանոթանալով ժամանակացույցին, ընտրում է տվյալ կիսամյակում ունկնդրելիք դասընթացը (դասընթացները) և կիսամյակի երրորդ շաբաթվա ընթացքում ՈԱ բաժին ներկայացնում մասնակցության հայտ՝ էլեկտրոնային ձևով և թղթային տարբերակով:

4.4. Ներկայացված հայտերի գրանցումն իրականացնում են Ուսումնական մասը և ՈԱ բաժինը միասին կիսամյակի ընթացքում: Ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

4.5. Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել նվազագույնը 5 մասնակից: Ճշգրտված ժամանակացույցը հաստատվում է

Համալսարանի գիտական խորհրդին առընթեր ՈԱ հանձնաժողովի կողմից և տեղադրվում Համալսարանի կայքէջում, ինչպես նաև ուղարկվում մասնակիցներին:

4.6. Խմբերի ձևավորումը, մասնակիցների ցուցակը և պարապմունքների ժամանակացույցը ձևակերպվում են Համալսարանի ռեկտորի հրամանով: Պարապմունքներն սկսվում են կիսամյակի ութերորդ շաբաթվանից:

4.7. Դասընթացի ուսումնական պլանում փոփոխություններ կարող է կատարել ՈԱ հանձնաժողովը, հաշվի առնելով մասնագիտական ամբիոնների առաջարկները:

4.7.1. Դասընթացի յուրացումն ավարտվում է ատեստավորումով (քննությամբ կամ ստուգարքով):

4.7.2. Պարապմունքներին մասնակցած, բայց ատեստավորում չանցած մասնակիցները քննությունը կամ ստուգարքը կարող է նորից հանձնել՝ կրկնելով դասընթացը /արդեն վճարովի հիմունքներով/:

4.7.3. Համալսարանից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել ՈԱ բաժնի կողմից՝ հաշվարկվելով ԱՎ ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների շնորհմամբ:

4.7.4. Ամփոփիչ ատեստավորումն անցած մասնակիցներին շնորհվում է համապատասխան վարկանիշային միավորներ, որոնք կարող են խթանել աշխատավարձերի հետագա վերանայման ժամանակ:

4.7.5. ԱՎ ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած ունկնդրին հանձնաժողովի որոշմամբ տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայագիր: Չավարտողները ստանում են տեղեկանք ծրագրին մասնակցելու մասին՝ կատարման ծավալի նշումով, առանց կցագրված վարկանիշային միավորների:

5. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԵՆ.

5.1. Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների կարգը, ծրագիրը, ուսումնական պլանը, դասընթացների դասացուցակը, մասնակիցների ուսուցման անհատական աշխատանքային պլանները:

5.2. ԱՎ ուսումնական գործընթացն ապահովող ուսումնամեթոդական գրականությունը, գիտելիքների ընթացիկ ստուգման, ստուգարքների, քննությունների անցկացման և արդյունքների ամփոփման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը: